Եթէ հայը ընդունել է երկարաձիգ բա-զիլիկաների շէնքը Միջագետքից եւ Ասորի-քից, իսկ քառակուսու գմբեթաւորը Իրանից, նա միայն մեքենական ընդօրինակող չէ, այլ զարգացրել է դրսից ընդունած տարրերը եւ ստեղծագործել յատկապէս, երկարաձիգ նորան յայտնի չէին այդ տիպի աւելի հին շէնքեր քան Արուճը Է. դարում եւ Երազգա-ւորսը ինններորդ, բայց ահա Պտղավանքը մօ-տաւորապէս մէկուկէս դար առաջ տալիս է այդ միութեան կատարուած փաստը եւ այն էլ այնպիսի կատարելութեամբ, որ իր զար-

Պատկ. 19

գմբեթաւորը, որ նախակարապետ է հան-դիսացել Թ. դարում բիւզանդական գմբե-թաւոր բազիլիկաներին, հայ ծագումով կայսրների ժամանակ: Տեսականապէս Ստրը-ժիգովսկին ընդունում է, որ Արուճի նախա-տիպը պէտք է ծագած լինէր Զ. դարում, գացման նախընթաց շրջանը պիտի ունենար: Նշանակալից տարբերութիւն կայ, սակայն, երկուսի մէջ. մինչդեռ Արուճի մէջ տեղա-կան հայկական արուեստը յաղթահարել է բազիլիկային, պահպանելով միայն երկա-րութիւնը, Պտղավանքի մէջ դեռ եւս զօրեղ